Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 935 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ԹԻՎ 2 ՄՍՈՒՐ- ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է վերանորոգել «Նոյեմբերյանի թիվ 2 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության թիվ 2 մասնաշենքը և մասնակի վերանորոգել թիվ 3 մասնաշենքը, որի արդյունքում կստեղծվեն հարմարավետ պայմաններ մանկապարտեզի սաների առօրյան կազմակերպելու համար:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	Հայ օգնության Ֆոնդ, Նյու Յորք, ԱՄՆ
4.	Ծրագիրը կատարողը	Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ, (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան 0010, Խորենացու փողոց 22, ՀՎՀՀ՝ 02517115)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Տավուշի մարզ, քաղ. Նոյեմբերյան, Կամոյի փողոց 10 Բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	68,517,765 դրամ

7.	Բարեգործություն ստացողը	«Նոյեմբերյանի թիվ 2 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (Հայաստանի Հանրապետություն, Տավուշի մարզ, քաղ. Նոյեմբերյան, Կամոյի փողոց 10, ՀՎՀՀ՝ 07401804)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականի հունվարի 8-ից մինչև 2024 թվականի օգոստոսի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքների նկարագրություն՝ 1) 2-րդ մասնաշենքերի տանիքի վերակառուցում, ջրհորդանների և ջրթափ խողովակների տեղադրում. 2) մետաղական կարկասով գիպսոկարտոնե միջնապատերի կառուցում. 3) նոր դռների և պատուհանների տեղադրում. 4) լամինատե և կերամոգրանիտե հատակների պատրաստում. 5) պատերի և առաստաղի սվաղ ու ներքին հարդարման աշխատանքներ. 6) սանտեխնիկայի տեղադրում. 7) էլեկտրալուսավության աշխատանքներ. 8) արտաքին աստիճանների և մայթերի կառուցում: Բյուջե՝ 68,517,765 դրամ Նախատեսվում է իրականացնել 2024 թվականի հունվարի 8-ից մինչև 2024 թվականի օգոստոսի 30-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«Նոյեմբերյանի թիվ 2 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի շինվերանորոգման աշխատանքների ծառայությունների ձեռքբերում - 68,517,765 դրամ:

11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի իրականացման շրջանակներում Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղը համագործակցելու է Տավուշի մարզպետի աշխատակազմի և Նոյեմբերյանի համայնքապետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Վերահսկողությունը կատարվելու է Հայ օգնության Ֆոնդի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով բարեգործության ոլորտը համակարգող լիազորված մարմնին կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

25.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ